ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՌՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ 80-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Ուրախացուցիր ժողովուրդը մեր՝ ոգեսունամյա Քու հոբելյանիդ ոսկի պարգևով:

Հուզեցիր, ոգևորեցիր ու հերշնչեցիր բոլոր հայերը: Եվ մեր սրտերուն ամեն յարերեն աղոթք բարձրացավ հայոց Աստուծուն Քու կյանքիդ համար, Քու փառքիդ համար:

Քու մեծ սրտիդ մեջ, Քու լույս խոսքիդ մեջ ժողովուրդը մեր իր հոգին գտավ՝ բյուրեղացումը իր վառ հույզերուն, իրավ խոհերուն, արդար տենչերուն:

Պատմությունն ամբողջ Քու կյանքիդ՝ պատմությունն եղավ Քու ազիզ ազգիդ՝ այրող վիշտերով, որոնումներով, հաղթանակներով:

Արշալույսին վառ Քու կյանքիդ սեմին գիշեր էր իջեր հայոց երկինքին. բայց մայրամուտին Քու ընծա կյանքիդ արշալույս ծաթեց Հայոց աշխարհին:

Այդ լուսաբացին Դուն արև եկար և Քու լույս հոգով հայոց արևին լույսն աճեցուցիր Քու կյանքի երգով, Քու հույսի երգով, Քու սիրո երգով:

Սիրելի՛ Վարպետ, թանկագի՛ն Վարպետ, հարազա՛տ Վարպետ: Քեզ արև օրեր և լույս հավիտյան Տիրոջն օրհնությամբ և սուրբ հավատքի անմահ զորությամբ:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ